ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2005-2007 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման հիմքերը և ուղենիշերը

Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակել և հասարակության դատին է ներկայացնում Հայաստանի Հանրապետության 2005-2007թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր):

Ծրագիրը մշակվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջների համապատասխան և իր հերթին հանդիսանալու է հիմք ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի մշակման համար:

Ծրագրի հիմքում են դրվել 2003 թվականի հունիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած՝ ՀՀ կառավարության գործունեության ծրագրով, ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով և ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1030-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2004-2006թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված՝ ՀՀ կառավարության հիմնական ռազմավարական երկարաժամկետ և միջնաժամկետ գերակայությունները:

Ներկայացվող ծրագրի ուղենիշերն են՝ ժողովրդավարության զարգացումը և քաղաքացիական հասարակության ձևավորումը, իրավական պետության և քաղաքակիրթ շուկայական տնտեսության կայացումը, սոցիալական արդարության հաստատումը, երկրի անվտանգության ապահովումը:

Պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է պետության ինքնիշխանության և կազմակերպվածության ամրապնդման, ժողովրդի համընդհանուր բարեկեցության ապահովման համար համապատասխան նախադրյալների ստեղծումը: Նշվածն իրագործվելու է հանրապետությունում մի շարք հանգուցային ոլորտներում ծավալվող բարեփոխումների և զարգացման ծրագրերի իրականացման շնորհիվ:

Ծրագրում շարադրվում են ՀՀ կառավարության մակրոտնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության հիմնադրույթները, ներկայացվում են դրանք բնորոշող երկարաժամկետ և միջնաժամկետ ցուցանիշները: Ծրագրում ներ-

կայացվում է նշված բարեփոխումների և զարգացման ծրագրերի նկարագիրը (հետապնդվող նպատակները, լուծման ենթակա խնդիրները, սպասվելիք արդյունքները, շահառուները), ինչպես նաև դրանց ֆինանսական ապահովման հարցերը:

Ծրագիրը հանդիսանում է ՀՀ կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկը: ՀՀ կառավարությունը միջնաժամկետ բյուջետավորումը դիտում է որպես պետական ծախսերի արդյունավետ կառավարման գործիք, որի միջոցով մտադիր է բարձրացնել պետական ծախսերի տնտեսական և ֆինանսական արդյունավետությունը՝ մասնավորապես աղքատության հաղթահարման և Հայաստանի Հանրապետության հասարակության առավել անապահով մասի կենսամակարդակի բարելավման ուղղությամբ ՀՀ կառավարության նպատակների իրագործման համար:

Մասնավորապես, ՀՀ կառավարությունը ներկայացվող Ծրագիրն իրագործելիս՝ նախատեսում է հասնել վերը նշված նպատակներին հարկաբյուջետային կարգապահության բարձրացման, ծախսերի իրականացման ռազմավարական գերակայությունների սահմանման և կատարվելիք ծախսերի արդյունավետության բարձրացման միջոցով:

Երկարաժամկետ հիմնական հարկաբյուջետային նպատակները

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ՀՀ կառավարությունը Ծրագրի (և հետագայում նաև ՀՀ 2005 թվականի պետական բյուջեի նախագծի) մշակման ընթացքում առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում ամրագրված հարկաբյուջետային սկզբունքներով: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ծախսերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում այդ սկզբունքների իրագործման հնարավորությունները, ՀՀ կառավարությունը մտադիր է կիրառել այդ սկզբունքները երկարաժամկետ հեռանկարում: Այս սկզբունքները հիմք կծառայեն կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածների համար մշակվող և իրագործվող քաղաքականությունը երկարաժամկետ նպատակների հետ համաձայնեցնելու համար:

Կարճաժամկետ և միջնաժամկետ հարկաբյուջետային կանխատեսումները

ՀՀ կառավարությունը առկա ծախսային գերակայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսային մակարդակը որոշելու համար: Որպես հիմք ընդունելով 2005 թվականի՝ ՀՆԱ 16.0 %-ի չափով կանխատեսված պետական բյուջեի եկամուտների մակարդակը և ելնելով ՀՆԱ-ի 2.23%-ի չափով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից (որը 0.84 տոկոսային կետով պակաս է 2004 թվականի ծրագրային ցուցանիշից)՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է այդ տարում պահպանել ծախսերի մակարդակը ՀՆԱ 18.2 %-ի կամ 355.4 մլրդ դրամի չափով: Միջնաժամկետ հեռանկարում կշարունակվի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի դեֆիցիտի հարաբերակցության աստիճանական նվազեցումը՝ վերջինիս մեծությունը 2006 և 2007 թվականներին համապատասխանաբար հասցնելով մինչև ՀՆԱ-ի 2.01 և 2.00%-ը:

Միաժամանակ կշարունակվի ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցության աճը: Մասնավորապես 2005-2007 թթ. պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ համապատասխանաբար կկազմի 16.0 %, 16.3% և 16.6%: Նշված պայմաններում դրական միտումները կշարունակվեն նաև պետական պարտքի բնագավառում:

Հարկաբյուջետային մի շարք հիմնական միջնաժամկետ ցուցանիշների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Ցուցանիշների անվանումները	2003 փաստացի	2004 հաստատված պետական բյուջե	2005 ծրագիր	2006 ծրագիր	2007 ծրագիր
1. Եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ	18.0%	15.3%	16.0%	16.3%	16.6%
2. Ծախսեր	19.3%	18.4%	18.2%	18.3%	18.6%
- ընթացիկ ծախսեր	13.7%	13.8%	15.0%	14.7%	14.8%
- կապիտալ ծախսեր և զուտ վարկավորում	5.6%	4.6%	3.2%	3.6%	3.8%
3. Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներ	1.3%	3.1%	2.2%	2.0%	2.0%
4. Պետական պարտք	41.7 %	38.3%	36.5%	34.9%	33.5%
- արտաքին պարտք	39.1%	35.7%	33.8%	32.1%	30.7%
- ներքին պարտք	2.6%	2.6%	2.7%	2.8%	2.8%

Ծախսային գերակայությունները

Հաշվի առնելով վերոհիշյալը՝ ՀՀ կառավարությունն առաջիկա տարիների համար սահմանում է պետական բյուջեի հիմնական ծախսային հետևյալ գերակայությունները (որոնք, ի դեպ, համահունչ են ՀՀ 2003-2005թթ. ՄԺԾԾ-ով սահմանվածին).

ա) սոցիալական ոլորտի առանձին ճյուղերում (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն), ինչպես նաև պետական կառավարման բնագավառներում պետական մարմինների գործունեության արդյունավետության, կատարվող ծախսերի և մատուցվող ծառայությունների նպատակաուղղվածության և հասցեականության մակարդակի բարձրացման, դրանք բնակչության համար ավելի մատչելի դարձնելու նպատակով իրականացվող բարեփոխումների ֆինանսական ապահովում,

բ) հանրապետության տարածքային ամբողջականությունը, տարածաշրջանում կայունությունը և Ղարաբաղյան հակամարտության կողմերի ուժերի հավասարակշռությունը պահպանելու նպատակով պաշտպանության և ազգային անվտանգության կառույցների կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ապահովում,

գ) տնտեսության առանձին ոլորտներում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա) ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի իրականացում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2003-2007թթ. ժամանակահատվածում պետական բյուջեից հիմնական ուղղություններին բաշխվող հատկացումների տեսակարար կշիռները՝ ըստ համապատասխան տարիների պետական բյուջեների ընդհանուր ծախսերի:

Ուղղությունները	2003 փաստացի	2004 հաստատված պետական բյուջե	2005 ծրագիր	2006 ծրագիր	2007 ծրագիր
1. Սոցիալական-մշակութային ճյուղեր	30.9%	35.6%	40.2%	41.5%	43.4%
2. Պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակատարողական և արտակարգ իրավիճակների համակարգեր	19.7%	20.9%	20.7%	19.9%	19.2%
3. Տնտեսության ճյուղեր	28.4%	21.7%	16.6%	14.7%	14.3%
4.Պետական կառավարում	3.6%	8.7%	9.1%	9.5%	8.9%
5. Աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	2.9%	3.3%	3.9%	3.6%	3.5%

Ինչպես երևում է աղյուսակից, բյուջետային ռեսուրսների բաշխումը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության՝ վերը ներկայացված միջնաժամկետ ծախսային գերակայություններին: ՀՀ կառավարության՝ դրանց անշեղորեն հետևելու վճռականության մասին է վկայում նաև 2005-2007թթ. ժամանակահատվածում 2004 թվականի



մակարդակի համեմատությամբ լրացուցիչ բյուջետային ռեսուրսների բաշխման հետևյալ պատկերը.

Բյուջետային ռեսուրսների վերը ներկայացված բաշխումը և դրա շրջանակներում հանրապետությունում հանգուցային մի շարք ոլորտներում իրականացվող բարեփոխումների և զարգացման ծրագրերի իրականացումը, մեր կարծիքով, բավարար նախադրյալներ են ստեղծում հանրապետությունում աղքատության հաղթահարման, մարդկային կապիտալի վերականգնման, կայուն տնտեսական զարգացման և երկրի ֆինանսական հզորացման համար և, դրա միջոցով միջազգային ասպարեզում երկրի մրցունակության բարձրացման շնորհիվ, ժամանակակից աշխարհում արժանապատիվ տեղ գրավելու, ՀՀ կառավարության երկարաժամկետ նպատակներին հասնելու համար:

Վերը նշված նպատակների իրագործման գրավականը պետք է հանդիսանա հանրապետության իշխանությունների և հասարակության լիարժեք փոխըմբռնումն ու սերտ համագործակցությունը:

ՀՀ կառավարությունը, հրապարակելով սույն ծրագիրը, հույս է հայտնում, որ այն կարժանանա Հայաստանի Հանրապետության հասարակության ուշադրությանը և կբացահայտի միջնաժամկետ հեռանկարում մակրոտնտեսական և հարկաբյուջետային կարգավորման բնագավառներում ՀՀ կառավարության կողմից իրականացվելիք ընդհանուր և ճյուղային քաղաքականությունները, դրանց իրականացման անհրաժեշտությունը և սպասվելիք արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ